

ՊԱՐԳԵՎ ԱՐԵՆԱ ԴԵՌՈՒՅԱՆ

**ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԴՈՒԹՅԱՆԸ  
ԵՎ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ  
18-ՐԴ ԴԱՐՈՒՄ**



ովսեփ արքեպիսկոպոս Արդությանը 18-րդ դարի հայ ազատագրական շարժման ականավոր գործիչներից մեկն է: Նա բան տարի շարունակ ճիռ ու ջանք չի խնայել աշակեցելու հայ ժողովրդի ազատագրության՝ թոթագիւղու պարսկա-թյուրբական արյունու լուծք: Նա արել է նմանապես հնարավորը՝ ամրապնդելու հայ և ոռու ժողովրդիների դարավոր բարեկամությունը:

Մեր նյութից դուրս է այստեղ խոսել հայ ազատագրական շարժման գործում Հովսեփ արքեպիսկոպոսի կատարած դերի մասին ընդհանրապես:

Ներկա հոդվածով մենք նպատակ ունենք լուսաբանել Հովսեփի արքեպիսկոպոս Արդությանի գործունեությունը տպագրության ասպարեզով, որը, վերջին հաշվով, դարձյալ կապված է եղել հայ ազատագրական շարժման հետ, քանի որ նա իր այդ ձեռնարկով նպատակ է ունեցել զարթեցնել հայերի մեջ ազգային ինքնագիտակցության գաղափարը և մտավոր սնունդ մատակարարել ժողովրդական լայն շրջաններին:

Հովսեփի արքեպիսկոպոսը շատ լավ զգում էր, որ հայ ժողովրդի ազատագրության գործի համար մեծ նշանակություն ունեն հայ պատմիչների թղթած հարուստ ժառանգության հրատարակումն ու ընթերցումը. Նա իր մի նամակում գրում է. «... Ազգն մեր ծարակի են ընթեռնլոյ պատմագիրս», իսկ դրա համար անհրաժեշտ էր հիմնել տպարան:

Հովսեփի արքեպիսկոպոս Արդությանը, հետեւելով իր մեծ ու եռանդում տևառություն ծիրեն ծրեանցում, դիո շատ վաղ ցանկա-

նում է Ռուսաստանի հյուսիսային շրջաններում, ի գին ամեն զոհողության, տպարան բաց անել: Այս կապակցությամբ նա երկար տարիներ բանակցություններ էր վարում Ղուկաս կաթողիկոսի և Ամստերդամի հայերի հետ՝ Ամստերդամի հայ տպարանը ձեռք բերելու համար, որը սակայն, ի վերջո, անհաջողության է մատնվում: Արդության արքեպիսկոպոսը մինչև Ռուսաստանում հայկական առաջին տպարանի հաստատումը, ստիպված է լինում գոհանալ եվրոպայում գործող հայ մշակներին տպագրական գործեր միայն հանձնարարելով: Այդպես, 1780 թվականին կոնդոնում Արդությանի ցանկությամբ հրատարակվում է «Եւաւենութիւն նաւառոյ Եկեղեցւոյ Հայատանեայց» գիրքը, «Թարգմանութիւն ի հայկական լեզուէ ի լատին բարբառ ի Յովհաննիսէ Սկրոտերեան», որը պարունակում է նաև ներսին Շնորհալու «Հաւատառվ խոստովանիմ» լատիներեն, ֆրանսերեն և անգլերեն թարգմանության հետ միասին և որը լուս է տեսնում Գրիգոր Խալդարյանի տպարանից:

Ռուսաստանում հայերեն լեզվով առաջին տպարանը հիմնում է դարձյալ վերոհիշյալ շուղայեցի Խոչամալի որդի խոչա Գրիգոր Խալդարյանը 1781 թվականին<sup>2</sup>:

1. Գյուտ ավագ քահանա Աղանյան, «Դիվան Հայոց պատմության», Թիֆլիս, 1911 թ., գիրք թ., էջ 487 (Ժանոթագրությունը):

2. Տպարանի հիմնադիր Գրիգոր Խալդարյանը շպիտի շփոթել երա պապի հայր Գրիգոր Խալդարյանի հետ, որը հիշված է 1713 թվականին Ամստերդամում:

Հայ տպագրության այդ շարքաշ մշակի մասին կենսագրական քիչ տեղեկություններ կան։ Գրիգոր Խալդարյանի ու նրա հիմնադրած տպարանի մասին կցկուր տեղեկություններ ենք գտնում 1783 թվականին Պետերովդում՝ Հրատարակված «Ժամակարգութիւն հասարակաց աղօրից» գրքի հիշատակարանում։ «Վասն հարկաւորովթեան իմիթ և լինել էնդկաց զնացի յիրկիրն Անգլիացոց և ի մեծ քաղաքն լոնդոն, — գրում է Խալդարյանը, — և մնացի իր ամս տասն. և ի միջոցի սոյն տասների ամացս անդադար որոնէի գտանել զարհետաւոր մի, զի վորագրեալ տայցէր ինձ գուառս հայկական։ որք թէպէտ բազումք կային, բայց ոչ կամէին շինել և տալ ինձ զպողատեայ տառսն, և ոչ զմայր տառիցն, այլ միայն զկաղապարեալման, յաղագս որոյ տակափն մնացի ի նոյն տենչմանս անկատար, բայց լցուցիչն ամենայն կարսութեանց՝ ելից և զիմ բազմամեայ փափագ սրտին առաքելով առ ի յանակնկալ ժամու զար[ն]եստաւոր ումն անգլիացի, զոր նկեալ և իմացիալ զներարմադրեալ խորհուրդ սրտիս, յանձն էառ շինել և տալ ինձ զայն, զոր խնդրէի. և իմ հաճեալ բանից նորին պատուէր ետու վորագրել զերիս տեսակ գիրս. զորքան վարձս խնդրեաց, զայն և խոստացայ տալ անխնայօրէն, Եւ ի յաւարտին նորին զտառսն, հարկ եղէ մեզ վերստին դառնալ յերկիրն Ռուստաց, ի կայսերանիստ և աստուածապահ մայրագան Սանկտպետերութք։

Հիշատակարանից երեսում է, որ Գրիգոր Խալդարյանը, նախքան իր տպարանի լոնդոնից տեղափոխելը, եղել է Ռուսա-

տպագրված «Հայելի Աստուածաշումը» գրքի հիշատականում։ ...Դարձեալ յիշեցէր ի Տէր, — կարգում ենք աթուեղ, — զազուամենեար աղէն խօշայ Գրիգորն և զանգրանիկ որդին Յովհաննէսն ի Տէր հանգուցեալման։

Արվեստի վաստակավոր գործի Գարեգին Առնենը, իր ռշայ գիրքը և տպագրության արվեստը աշխատության մեջ, բերելով այդ Հատվածը (էջ 168), կասկածանքով է վերաբերվում հիշատակարանում հիշված Գրիգոր անվանը<sup>1</sup> թե «Արդյուր պապը չին եղել այս Խալդարյան Գրիգորի։ Որ խկապես խոզա Գրիգորը Խալդարյան Գրիգորի պապի հաւոն է եղել, այդ պարզ երեսում է 1783 թվականին Հրատարակված «Ժամակարգութիւն հասարակաց աղօրից» գրքի հիշատակարանից, ուր ասված է. «Հայցեմ աստանօր ի շերմեռանգ վայելողացդ գրույս, զի իշեսցիք ի մաքուր յաջօթս ձեր զհայրն իմ զջուղայցի Խալդարյանց Խօշամալն... զպապն իմ զիօշայ Յովհաննէսն և զհայր պապու իմոյ զիօշայ Գրիգորն։

տանում, ուսումնասիրել է հայկական տպարան այնտեղ հիմնելու հնարավորությունը և նոր միայն փոխադրվել է Պետերովդում։ Գրիգոր Խալդարյանը, բացի Արդության արքեպիսկոպոսի ցանկությամբ տպած վերահիշյալ գրքից, Լոնդոնում այլ գրքեր չկարողացավ Հրատարակել, միայն Ռուսաստանում է պարեկամական միջավայրում և հայկական մեծ գաղութների առկայության պայմաններում, նա հնարավորություն ստացավ իր լուսավորական օգտաշատ գործը մեծ թափով ծավալելու։

Պետերբուրգում տպարան հիմնադրվելու առաջին օրերից, Գրիգոր Խալդարյանը արժանանում է ուսուահայոց առաջնորդ Հովսեփի արքեպիսկոպոս Արդությանի աշակեցությանը։ Արդությանը թեմի գործերով հեկել էր մայրագաղաք ու վայելում էր կայսրունու և արքունիքի համակրանքն ու հովանավորությունը։ Սրբազնը քաջալերում է Խալդարյանի ձեռնաըլը՝ խոստանալով աջակցել նրան՝ գրքի հանձնարելով տպելու «Ժեսեալ վորագազմ տիպս մեր, կարի տրախ տեղեւ (Հովսեփի արքեպիսկոպոսը)։ Պ. Ա. Գ.), պատմում է հիշատակագիրը, — և հրամայեաց տպել զիոքոր տերաբան այրուգենից, զոր և տպեցի ծախիւք իմօք, և խոստացաւ ևս ընձեռել մեղ զգրեանս զանազանս առ ի տպելու։

1781 թվականին այրբենարանը տպելուց հետո, Խալդարյանը նկատում է, որ իր տառերի տեսակները քիչ են, ուստի և լոնդոնից հրավիրում է իր ծանոթ փորագրիշ վարպետին և նոր տառեր փորագրել տալիս։ Հովսեփի արքեպիսկոպոսն ազգուամ է Խալդարյանին թի' բարոյապես և թի' նյութապես։

Եվ այսպես, Պետերբուրգում մկանվում են հայերեն գրքերի տպագրական առաջին աշխատանքները։

1783 թվականին տպարանատերը, իր անձնական ծախրով, հրատարակում է ժամագիրք՝ «Ժամակարգութիւն հասարակաց աղօրից» խորագրով։ Սա բավականին հաջող տպագրական մի գործ է։ Գրիգոր ունի  $9,5 \times 14,5$  սմ. մեծություն, բաղկացած է 577 միայնու էշերը, յուրաքանչյուր էշուր 25 տող՝ Տառերը պարզ են, դյուրընթեռների և գեղցիցիկ շարված։ Գրքում, բացի զիստառերից, տրոնք հայկական մանրանկարչությունից վերցված թունագրեր են, մնացած

1. Խալդարյանի տպարանն ունեցել է ինն տեսակ հայերեն և երկու տեսակ ուսուերեն գրեր, ինչպես նաև բազմաթիվ պատկերներ (կլիշեներ) (տե՛ս Գյուտ ավագ թիֆլիս, 1911 թ., գիրք թ., էջ 14)։

զարդարանքները՝ խորանները, լուսանցազարդերը և չին ու նոր Կտակարաններից տեսարաններ պատկերացնող նկարները, ուստական ոճով են՝ վերցված ժամանակի ուստական հրատարակություններից։ Գիրքն ունի հիշատակարան, որտեղ շարադրված է տպարանի հիմնադրման մանրամասն պատմությունը։


Մեկ ու կես տարվա ընդմիջումից հետո, 1785 թվականին, տպարանը լույս է ընծայում «Պատմութիմն Սուլր Գրոցքը», գրքի տիտղոսաթերթում նշված է. «Արարեալ համառոտ հարցմամբք և պատասխանեօք, յաղագս դեռահասակ մանկանց։ Թարգմանեալ ի ուստացաց լեզուէ ի հայ բարբառ ի պարոն Յարութիւնէ Դաւթեան ջուղայեցւոյ։ Եւ տպագրեալ հրամանաւ Տեառն Յովաչփայ սրբազնա արհի եպիսկոպոսի և առաջնորդի ազգին Հայոց որք են ընդ տէրութեամբ Ռուսաց... Յամի Տեառն 1785։ Իսկ ի թուին Հայոց ԽՄՂԴ. Ասմիւք և տպիւք պարոն Գրիգորին։ Ի Ասմկտպետրուրքի։ Կրկին հրամանաւ կառավարչացն բարեկարգութեանց։ Գրքում տեղակորված է նաև իրավարանական բովանդակությամբ մի տեքստ, որը վերնագրված է՝ «Առ ի լնլոյ զպարապ տեղիս՝ եղաք բան ինչ յաղագս իրաւանց. թարգմանեալ ի յանդիիացւոց լեզուէ ի հայ բարբառ ի պարոն Գրիգորէ Խալդարեանց կոչեցելուր։ Գիրքը բաղկացած է 68 էջերից և ունի 10×16 սմ. մեծություն։

Նույն 1785 թվականին Խալդարյանը լույս է ընծայում նաև ներսես Շնորհաւու «Յիսուս Որդի»ն։ Դա՝ այդ գրքի 8-րդ տպագրությունն էր. առաջին անգամ լույս էր ահսել Վենետիկում 1643 թվականին։

Արդության արքեպիսկոպոսը միշտ իր նամակներում ցուցմունքներ էր տալիս Գրիգոր Խալդարյանին, օգնում էր գրքերի տպագրության անթերի լինելու գործին, ոգևորում էր տպարանի անխոնաց աշխատողին, ուղղում էր թույլ տված սխանները, աշխատում էր տպագրված գրքերի տարածման գործով՝ կապ պահելով կոստանդնուպոլիսի և Հնդկաստանի գրասեր հայերի հետ, մյուս կողմից, նաեւ կար որոնումներ էր կատարում վանքերի մատենադարաններում և զանազան անձերի մոտ ու տպագրության համար պատրաստում մինչ այդ անտիպ մնացած բազմաթիվ ձեռագրեր։

Արդությանի այս շրջանի գործունեության մասին հարուստ նյութեր են պարունակվում Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում պահպանվող և Արդությանի ձեռագրով իսկ գրի առնված թղթակցությունների միքանի մատյաններում։

1786 թվականի հոկտեմբերի 18-ին Արդության արքեպիսկոպոսը նոր-Նախիջևանից գրում է Գրիգոր Խալդարյանին, որ նրանից ստացել է 18 հատ ժամագիրք, 50 հատ «Ճիշտու Որդի» գրքից և 250 հատ Սուլր Գրոց պատմություն և այլն։ «Եւ... ամբողջ առաջնորդի ի Ստանալով, կէս գրեանցն տեղոյ իշխանաց ընծայեցի գրով իմով, իսկ կէսն գրեցի շատով ի Բարսրայ— ի Հնդկիս առաքեալ, նմանապէս ընծայեալ իշխանացն ի



1785 թվականին, Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Պատմութիմն Սուլր Գրոցի» տիտղոսապետը։

Դիմաց իմոյք Նույն նամակում տեղեկացնում է, որ Թիֆլիսի աննպաստ դեպքերի հետևանքով, գրքերի վաճառման գործը անհաջողության է մատնվել. Արդությանն այդ մասին գրում էր. «Մինչև այժմ առնող ոչ գոյ... Զի իրաքանչիր ոք զինքենէ խորհի թէ զերծանելոց իցէ արդեօք ի վերայ յարուցեալ թշնամոյն, որք արդէն ի սուր և ի գերութիւն մղեն զնոսա»։ Ապա Արդությանը անդրադառնում է ներսես Շնորհաւու «Յի-

սուս Որդի» գրքում տեղ գտած՝ տպագրական վրհպակներին. «... Գիտացեալ իցեմ ի Յիսուս Որդույն ի տպագրութիւն բաւական սիմայանք ունի, բայց ներելիք վասն միայնութեանդ, և քանի ոտանաւոր խրատ առաքեցի առ քեզ զնել ի վերին Յիսուս Որդույ, դուռ ոչ ենթեր...»<sup>1</sup>:

1786 թվականին Խալդարյանի տպագրատումը հրատարակում է շորս գիրք՝ «Աստուածաղեց», «Ճաշոց», «Աւետարան» և

# ԳՐԱԴԱՐԱՆ

Հայոց առաջնորդութեան և Աստվածաշնչի կոն որ Արքայական թիվ է զիշէի,  
Եղափառագործ սրբոց թարգմանչացն  
ապրու Յահակոց և Սնկութեաց:

၁၃၂၈ ၁၃၂၉ ၁၃၂၀ ၁၃၂၁ ၁၃၂၂ ၁၃၂၃ ၁၃၂၄ ၁၃၂၅ ၁၃၂၆ ၁၃၂၇ ၁၃၂၈ ၁၃၂၉ ၁၃၂၁၀

၁၃၈၂ ၁၃၈၃ ၁၃၈၄ ၁၃၈၅ ၁၃၈၆

Brown ST 1787: July 1<sup>st</sup> Pacific Ocean 2 miles off

**THE LUSQESPEWPS.**

1787 թվականին, Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Եղիշէ պատմազիրք»ի տիտղոսաթերթը:

«Էլէմ զայրակղութեան (այսինքն՝ ալիգորն և պատճառ պատառման երկուց եկեղեցեացն Արևելականի և Արևմտականի), շարադրեցեալ յիրիա ՄԵՆԻ առէսէ եահիսկոպուտ...».

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի  
ձեռագիր № 2949, թ. 24ա-ր:

իսկ հաջորդ տարին՝ Կրկու դիրք՝ «Եղիշէ» և  
«Լարենառ» ժամագիրք:

Եղիշեի հրատարակությունը նշանակալից երկույթ էր հայ տպագրության պատմության մեջ, քանի որ 1764 թվականի Կոստանդնուպոլիսի հրատարակությունից հետո՝ այդ գրքի երկրորդ տպագրությունն էր: Գիրքն ունի  $9 \times 14,5$  սմ. մեծություն և բաղկացած է 413 էջերից: Եղիշեի տիտղոսաթիրուու նըշված է. «Դիբը որ կոչվ Եղիշեէ պատմագիրք: Շարադրեալ գիտնական և խստակրոն սուրբ վարդապետին Եղիշեի, աշակերտի Սրբոց Թարգմանչացն մերոց Խսահակայ և Մեսրոպայ» և այլն, Ալրդեամբք և ծախիւր բարեկաշտօն և ազնուատուո՞ն Մանիշարեանց Աստուածատրեան ազնիւ պարոն Մարգարին: Յամի Տեառն 1787: Խակ ի թուին Հայոց ԱՄՐԼՁ և այլն, Գրքի առաջարանը վերնագրված է հետեւյալ կերպ. «Առ ընթերցող սուրբ մատենիս. նախսերգանք արաշեալ ուրումն բանասերի Պետրոսեան Ստեփանուսի Ակնեցոյ» (էջ 3—12): Գրքի հիշատակարանում խոսվում է գլխավոր մեկենաս Մանիշարյանցի և նրա մերձավորների մասին, հիշատակվում է նաև «երջանկազարդ պարոն Յօհաննէսն՝ որ և է հարիւրապետ ի մէջ գորացն Մուտատաց...»: Հիշատակագիրը հետեւյալ ձեռվէ է բնութագրուած Մանիշարյանցի առատաձենությունը. «... Զի բարեհամբաւ և խորեմազարդ ազնուականս ըստ մեծի սիրոյն, զոր ոմի առ ազգս խոր և ըստ գրասեր բարուց իւրոց՝ որ միշտ բաղդայ լինել յազգի իւրում այնք բարիթ, որք գտանին ի զանազան ազգս, որոց բաժեացն մի է և այս փոքրիկ գրայիս՝ արդեամբք և ծախիւր իւրովք հաճեցաւ ի լոյս ածել զսա ի վայելումն հայկազոն բանասէր ընթերցողաց: Որ և սիրավառ բաղդանօֆ հետևի զայլ ևս քան զայս մեծածախ՝ ազգաօգուտ և հոգեշահ գրեան տպեցուանել տեառնապարդի գոյիւր իւրովք, ի յիշատակ ինքեան և իւրայնոցն»:

Ապա տպագրողը ներողություն է խնդրում գրքում եղած վրիպակների համար. «Թայց միջէ ուր ուրիշ գտանիցի ի սմա սխալանս ինչ, առ այն ներել աղաշեմ, քանզի այն ոչ է լիալ ի կամաց, այլ ի վրիպմանէ աշաց, որովհետև շիբ անսխալ բայց միայն Աստուած, որ և օրնենաւ է լափառեանս ամենա:

Արդության արքեպիսկոպոսը մի կողմից  
տպագրված գրքերը տևարկելով արտասահ-  
ման, մյուս կողմից էլ ձեռնամուկի էր լինում  
նոր գրքի տպագրման գործին։ Արդությա-  
նը, Գրիգոր Խաչարյանին գրած մի նամա-  
կում գրում է, որ Աղայ Մինասն հաճեցա-  
թարգմանութիւն Սովորէսի Խորենացւոյն, և  
ոպումն հաբերէն և ոռւսերէն իւր խառօվին

որ և ինքն գրեաց քեզ...»<sup>1</sup>: Բայց Խորենացու պատմությունը լուս չտեսավ, մեզ անհայտ նղող պատճառների հետեւանքով: Արդությանը դարձյալ իր մի նամակում նշում է, որ Գրիգոր Խալդարյանին ուղարկել է նրա խնդրած «Եփրեմ Խուրիխն», նաև «Փետրոս Թագաւորի համառօտ պատմութիւն»ը, որ «Պարոն Յարութիւն Դաւիթեան թարգմանեաց ի բարբառ մեր, ըստ ինդրոյ Թարեան աղացի որդույն, և ի մէջ սրբագրեցաւ որքան և կարեցաք վերահասու լինելու: Արդությանը Հանձնարարում է «Տպել զվեց (600) հատ, երկու հարիւր հայերէն և ուստերէն, իսկ չորս հարիւր միայն հայերէն, որ արտաքոյ վիճակն իցէ գնալոյ...»<sup>2</sup>: Վերոհիշյալ գրերի տպման մասին էլ տեղեկություն շունենք. Հավանաբար նյութական աննպաստ դրությունն է պատճառ դարձել, որ այդ կարեռը գրերը, հակառակ Արդությանի և Խալդարյանի մեծ ցանկությանը, չեն հանձնվել տպագրության:

Հակառակ Արդության արքեպիսկոպոսի և Գրիգոր Խալդարյանի գերմարդկային զանքերի, տպարանը ընկնում է պարտքի տակ: Արդությանը այլևս ի վիճակի չէ օգնելու. նա նկարագրելով Հովհաննես Լաղարյանին իր անձով վիճակի մասին, գրում է, որ ապրում է «տառապեալ կենօք, քաղցածնացեալ... այս չէ իրաւունք, մինչև ե՞րբ պարտիւր ապրեմ...»: Գրիգոր Խալդարյանին դրած նամակում նա գրում է. «Եթէ ես ունիցի ինչ, սրտագիտն Աստուած գիտէ, որ ես զեթեղ ալլոց ապաստան չէի թողու, բայց ի ժողովրդենէ հատեալ կայ մուտ մեր և եթեք տարի է ոռոճիկս շտան, մնացեալ եմ ողորմելիս: Նամակի շարունակության միջ ասլում է, որ եթե կաթողիկոսը և ժողովուրդը ցանկանան, և ինքը Կոստանդնուպոլիս գնա, ավելի օգտակար կլինի տպարանի գործին<sup>3</sup>:

Արդության արքեպիսկոպոսը աշխատում է տպարանը գուստ հանել այս վիճակից. անընդհատ նամակներ է գրում Ռուսաստանի, Կոստանդնուպոլիսի և Հնդկաստանի հայերին ու ազակցություն խնդրում: Նա ցտնկանում է, որ իր մոտ լինի սիրելի Խալդարյանը, «Ո՞հ, թէ լինէիր ինձ մերձ գոնեա բոլոր միաթարութիւն իմ դնելոց էի ի տպարանդ և գո-

վաւ բաւական միխթարութիւն ընկալնելոց էի վշտացեալ սրտի իմուլ...»<sup>4</sup>:

«Որպիս զու նմանապէս և ես սիրահարեալ եմ ի տպարանդ այդ, և ցանկամ յառաջացման դրին և յաջողութեան քոյ...»<sup>5</sup>, — այսպէս էր գրում Արդությանը Խալդարյանին: Ու նրանք միխթարում էին մեկը մյուսին. նրանք նույնացեալ էին իրենց վսեմ գաղափարներով ու նույն կարիքավոր վիճակով: Արտասահմանից ստացված նամակները

## ԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Դաստիարակության ազգային և մասնակի ակադեմիա Հայաստանի առաջատար գործակությունների համար համապատասխան պատվավորություն ունի Հայաստանի Հանրապետությունում:

Դաստիարակության ազգային և մասնակի ակադեմիա ԱՀ Գործադրության համապատասխան պատվավորություն ունի Հայաստանի Հանրապետությունում:

Դաստիարակության ազգային և մասնակի ակադեմիա ԱՀ Գործադրության համապատասխան պատվավորություն ունի Հայաստանի Հանրապետությունում:

Դաստիարակության ազգային և մասնակի ակադեմիա ԱՀ Գործադրության համապատասխան պատվավորություն ունի Հայաստանի Հանրապետությունում:

## ԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Դաստիարակության ազգային և մասնակի ակադեմիա ԱՀ Գործադրության համապատասխան պատվավորություն ունի Հայաստանի Հանրապետությունում:

1788 թվականին, Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս անսամբլութիւն» գրքի տիտղոսաթերթը:

Խորսիստառ էին նրանց: Արդությանը գրում էր Խալդարյանին, որ «... ի Պուտյոյ մեծ և փոքր գրեն մեզ ամենայնքն և տեղույդ գրեանցն ինդրեն»<sup>6</sup>:

Հովհանի արքեպիսկոպոս Արդությանը 1786 թվականի դեկտեմբերի 20-ին Գրիգոր

4. Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 27թ:

5. Նույն տեղում, թ. 31թ:


6. Նույն տեղում, թ. 30թ:

1. Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 6ա:

2. Նույն տեղում, թ. 27թ:

3. Նույն տեղում, թ. 26ա—թ:

Խալդարյանին գրում է այն մասին, որ ինքը գրել է բոլոր ազգին մինչև Հնդկաստան և կհռապա, որ նրանք կօգնեն։ Մի այլ նամակում, խորհուրդ է տալիս նրա տպագրած գրքերը Հնդկաստան ուղարկել՝ այնտեղ վաճառելու համար։ «Եթէ շնորհիւ Աստուծոյ մտցեն ի Հնդիկս տպագրեալքն մեր, տպարանիս մեծ օգուտ է լինելոց ըստ հասարակ գրելոյն իմոյ առ նոսա, մանաւանդ Շամիր աղայէն»<sup>1</sup>։



1788/9 թվականին, Պետերուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանից լրաց տեսած ներսուն ներհալու «Ընդհանրական»ի տիտղոսաթերթը։

Ճետագայում Արդությանը Պետերբուրգի հայկական տպարանը ժանր վիճակից դուրս բերելու համար առաջարկում է Խալդարյանին՝ տպարանը տեղափոխել Նոր-Նախիշեվան։ Նա խոստանում էր Խալդարյանի ընտանիքին Նոր-Նախիշեւանում ձրի բնակարան տալ և նյութական անհրաժեշտ պայմաններ ստեղծել։ Նրա կարծիքով, նախ որ՝ նոր-

Նախիշեւանը զուտ հայկական կենտրոն էր և անհրաժեշտ էր մի տպարանի գործությունը, իսկ երկրորդ, որ այդտեղից ավելի հեշտ էր տպված գրքերը Կոստանդնուպոլիս և Հնդկաստան ուղարկելլու։ Իր նամակում նա հայտնում է դարձյալ, որ տպագրած գրքերից ընծայ առաքեցի ի Պօլիս և ի Հնդիկս բարեկամաց մերոց վասն սիրահար առնելոյ նոցա նոր տպարանիդ, որում ամենեքեանք հաւանեալ են և սպասեն նորանոր գրեանց ստանալու<sup>2</sup>։

Ստանալով Հովսեփի արքեպիսկոպոսի հրավեր նամակները, Խալդարյանը պատրաստվում է տեղափոխվելու Նոր-Նախիշեւան, բայց հիվանդանում է և վախճանվում թողնելով տպարանի վրա 12.000 ռուբլու պարտք։ Նա մահանում է այն ժամանակ, երբ դեռևս ծղիշեի տպագրությունը չէր ավարտված։ Այդ երեսում է ծղիշեի վերջին էջից, որտեղ գրված է հետեւյալը։ «Ի վաղճանի յարտնի լիցի բարեպաշտ ընթերցողացդ, պատմագիրքս այս, մինչ ոչ էր ի կատար հասեալ տպելն, տէր և գործատոր տպարանիս նախ յիշեալ հեզանողի պարոն Գրիգոր Խալդարյանն Զուղայեցի հանդիաւ առ Քրիստոս յամի Տեամբ 1787 ի օգոստոսի ուղին, որոյ հոգեծին սիրելի որդի և ձեռնատմա աշակերտ, բարեբարւոյ պարոն Մկրտումն, քաջազան աշխատութեամբ ի հոգու տարիեալ ըստ հեղինակին, աւարտ հասոյց, որոյ Տէր տացէ կարողութիւն և յիշատակն օրհնութեամբ եղիցի, Ամէն»։

Խիստ ծանր է Կենել այն ժամանակվա պայմաններում տպարան կազմակերպելլու և մանավանդ հրատարակված գրքերի վաճառքից տպագրության ծախսերը ծածկելլու։ Իրավացի էր Խալդարյանը, երբ իր հրատարակած գրքերից մեկի հիշատակարանում դանդատվում էր ասելով. «Առ այս (տպարան հիմնելու համար)՝ Պ. Ա. Գ.» թէ որքան աշխատանս և ծախս արարաք՝ այն ամենայն ստուգապէս փորձողացն է յայտ։ Սակայն այս բոլորը չեն. հայրենասեր և անխոնց Խալդարյանը ոչ միայն իր ողջ հարատությունն է ներդնում հայերեն գրքերի հրատարակելու գործում, այլև հաճախ միայնակ է կատարում ամբողջ տպագրության գործը։

Հովսեփի արքեպիսկոպոս Արդությանը կրեմենչուկից 1787 թվականի սեպտեմբերի 10-ին Պետերբուրգի հայ բնակիչ պարոն Փիլիպոսին գրած իր նամակում դառն կերպով ողբում էր մահը անխոնց ու անձնվեր աշխատող հայրենասեր մշակին՝ Գրիգոր

1. «Փորձ», Տփիս, 1881 թ., № 2, էջ 23։

2. «Փորձ», Տփիս, 1881 թ., № 2, էջ 23։

**Խալդարյանի:** Արդությանը իր այդ նամակում գրում է, որ բոթալի լուրը ստացել է. «...Եղաք կիսակենդան շնչայքաղ և հոգէսպառ, յաղագս յանկարծ փոխեցման մեր պատուական ազիզ ջան աղայ Գրիգորին, օրահաս անկեալ որպէս որդէմեռ հայր. Կսկծմամբ մեծաւ մօրմօքիմ, և զաղիողորմ արտասուս միաւորեմ ընդ ձերդ դամուրակ արտասուաց և լամ զկորուատ անձին բարեկամին իմոյ և ասիս. Այ երանելի, զիսրդ խափանեցար զառաջադրութիւն մեր, զիսրդ անկատար թողեր զփափագ սրտի իմոյ և գնացեր առ Թրիստոս. ո՞վ սկիննուցու զհոգի քո, ո՞վ զանձն զնել կարեօք ի վերայ աղդին, ո՞վ բոլոր կեանս իւր ծախիցէ ի պատիւ նորայ, ո՞վ արդեօք սիրահար լիցի իբրև զբեզ, որ ի բոլոր կեանս իւր նախադաս համարիցէ զահաւէտութիւն բոյր ազդին քան զանձին իւրոյ հանգստութիւն: Այժմ առ քեզ ձայնեմ, ո՞վ ազիզ բարեկամ, ո՞վ աշխատաւոր և վըշտալի անձն. արի՛ ի նախիցնան, լի՛ց զփափագ իմ, արրո՛յ զպասեք իմ, յաղեցո՛յ զքաղցս իմ, զոր ունէի առ գործարանդ այդ քե հասուատեալս և ապա հանգի՛ր ի տառապանաց քոց և ի յերկանց: Արդ, դեռ չես ճաշակեալ ինչ զվայելչութիւն տաժանեալ գործոցդ, այլ հանապազ զդեմերմունս ընդ զանազան հոգոց, խառնեալ յարաֆամ տաննանօք մաշեալս: Տո՛ւ ինձ ճաշակ ի քաղցր վաստակոցդ, որում հանդ աղականին և ապա զու ճաշակեալ զվճիոն հասարակաց, ո՞հ, որ անժամանակ ածեր ինձ սուգ անդէպ ժամու, խափանեցեր զիմս առաջադրութիւն. և անդէն արարեր զիս և զբաղձանս իմ...»<sup>1</sup>:

Արդության արքեափիսկոպոսի համար շատ ծանր կորուստ էր նվիրված աշխատող իր սիրելի Գրիգոր Խալդարյանի մահը, բայց նա հարվածների տակ կրողը չէր: Հայ ժողովրդի ազատագրման համար Արդությանի մշակած ծրագրերում մեծ տեղ էր գրավում ժողովրդի լուսափորության հարցը, և սրանից հետո էլ մենք տեսնում ենք, թե նա ինչպիսի մեծ եռանդով ու ամբողջ ոգով մաքառում է՝ կանգուն պահելու այդ տպարանը:

Սահակ վարդապետին իր գրած նամակում Արդությանը, ողբալով Խալդարյանի կորուստը, նաև գրում էր, որ «Թերկրութիւն հոգուոյ թքեալ էի ի տպարանս մեր, թէպէտ զզանազան ցաւս կրէի և զվնասս...»: Նկատի ունենալով հանգուցյալի թողած մեծ պարտքը, նույն նամակում Արդությանը խորհում է պարտքը հատուցելու միջոցների մասին և ապա ասում. «Մեծ ամօթ է մեզ հոգեկից թղթալը, [որ] այսպիսի տպարան ի

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենագրարակ ձեռագիր № 2949, թ. 49թ-50ա:

ձեռաց թողումք...»<sup>2</sup>: Գրում է, որ նա էլ օգնի աշխատանքներին:

Խալդարյանը վախճանվելուց հետո, Վենետիկի Միհթարյանները, որ վաղուց աշք ունեին նրա տպարանի վրա, վործում են վճարել 3.000 թուման պարտքը և ձեռք բերել տպարանը: Սակայն Արդությանը երբ իմանում է այդ, անմիջապես թաղեռու վարդապետին ուղարկում է Պետերովորդ՝ տպարանը պահելու, մինչև ինքը կկարողանա դրամ ճար-րե...»<sup>3</sup>.




Ներսես Շնորհալի  
(Արտահանված Պետարքուգում Գրգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Ընդհանրական»ից)

2. Հայկական ՍՍՌ Պետական մատենագրարակ ձեռագիր № 2949, թ. 49թ:

3. Կոստանդնուպոլիսից Թագեռու վարդապետ Մարտրյանը, որ իրեն համարում է Զաքարիա պատրիարքի աշկերտ, Ռուսաստան էր եկել Արդությանի հրավերով և նշանակվել Ս. Խաչ վանքի վանահայր: Այս վանքում գացավարը հետագայում նա դաւանում է սրբազնի անձնական քարտուզը և նրա բոլոր ձեռնարկումների լավագույն աջակիցը: Ունեցել է հայկարանի համբավի 1801 թվականի Հովհաննի արքեպիսկոպոսի հետ կշմիածին գնալիս, Թագեռու վարդապետը ճանապարհի հիվանդում է և վախճանվում:

«Իմ հոգսն այժմ վասն պարտուցն է», — գրում է Արդությանը աղա Փիլիպոսին: Նա նամակներ է գրում թվ՝ Ռուսաստանի և թի՛ արտասահմանի հայ գաղութներին և աշակեցություն է խնդրում: Մոսկվայի հայերին գրած իր նամակում Արդությանը պարզ կերպով ցուց է տալիս, որ տպարանը պարութերից ազատվելուց և աշխատանքի անցնելուց հետո, նրա շահով Նոր-Նախիջևանում դպրոց է բաց անելու, որ տպարանն ու դրա-



Ներսես Շնորհալի Արոռի վրա բազմած  
(Արտահնձված Պետքրուրգում Գրիգոր Խաչարյանի  
տպարանից լույս տեսած «Ընդհանրական»ից)

րոցը, լուսավորության այդ երկու օջախները անքակտելի կերպով կապված են իրարև Արդության արքեպիսկոպոսը իր այդ նամակում ասում էր. «... Զի ոչ դպրատոնս առանց տպագրատան զհաստատութիւն կարէ առնել, և ոչ տպագրատոնս առանց դպրատան՝ զմշտնշենաւորութիմ, ապա հարկաւոր է զերկուան ի միասին յառաջացուցանել և Արկոցունց ի միասին թևակցութեամբ՝ զերկուին ևս կառավարել, և այնու զեղջիւր

իմաստութեան և իշխանութեան հայկազնցս ներ աստուծախնամ տէրութեանս այսմիկ բարձրացուցանելու<sup>1</sup>:

Այս շրջանում հատկապիս ծանր է եղնել Արդության արքեպիսկոպոսի դրությունը. մի կողմից նա պարտքերի տակ ծանրաբենված է, իսկ մյուս կողմից իր առողջական դրությունն էլ խիստ վատթարացած: Ինչպես ինքն է գրում նա տապատիւմ է «քարի ցամակ» և «մերձ է ի գերեզմանի»: Տպարանը պարտքերից ազատելու համար իր թափած երկարատև շանքերը մաշեցնում են նրա հոգին. «Ի պատճառ այդմ տպարանի իմ կեանքս մաշեցաւ և մաշեալ լինելոց է, — գրում է Արդությանը: Նա իրեն նմանեցնում է Գրիգոր Շղմայակրին, գիտե, որ միայն իրեն է վիճակված հատուցիլու այդ պարոքը, ու նա մինչև վերջ չի ընկճպում: 1788 թվականի նոյեմբերի 1-ին թաղես վարդապետին հետևյալ ոգևորիչ տողերն է գրում. «... Սակա տպարանի առման և մեր լինելոյն լեր աներկրայ. զի տրաքէս և քեզ խօսք եմ տուեալ, եթէ յումեքէ օգնութիւն ևս ոչ գտանիցի այժմ, երկաթ ի պարանցս ձգեալ մոլոյոց էի վասն նորա, ուր մնաց, որ ազնիւ ժողովուրդ իմ, յայտնի և աստօնին և ձեռնոտու լինել խոստանանան<sup>2</sup>:

Մոսկվայի հայ ազգաբնակչությունը ցանկանում է վճարել ամբողջ պարոքը, աճն պայմանով, որ տպարանը փոխանակ Նոր-Նախիջևան հաստատվեալ, փոխադրվի Մոսկվա: Ինչպես ասացինք, Արդությանը հետևյալ կերպ էր պատճառաբանում տպարանի Նոր-Նախիջևան փոխադրելու իր ցանկությունը. ա) «... Նախ վասն բազմութեան նոցա (այսինքն Նոր-Նախիջևանի հայերը ի նկատի տւնի: — Պ. Ա. Գ.) և զուտ հայոց ազգ գոլոյն անխառն այլոց ի մէջ, որք ցյահիտեան տեսել յուսամք. բ) «կասն մերձ գոլոյն՝ Պոլսոյ, Անատօլու և Ուսումնելու, ուր տպեալ գրեանք պարտին գոլ...»<sup>3</sup>:

Արդությանի նպատակը պարզ էր. անհրաժեշտ էր տպարանի շահով դպրոց պահել Նոր-Նախիջևանում, որպեսզի տգիտությունից ազատվի հայ ժողովուրդը: Հետևեաբար, նա ոշնչով չէր կարող զիշել իր ազգօգուտ և միանգաման ճիշտ եղող ծրագրից. ահա թե ինչո՞ւ այդ նպատակի իրագործման համար նա կանգ չէր առնում նույնիսկ իր անձնական զարդեղները վաճառերուց. այդ կապակ-

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 58թ.

2. Նույն տեղում, թ. 86ա,

3. Նույն տեղում, թ. 96ա:

ցությամբ նա գրում է. «Եթե Մոսկովին ժողովորդն չկամեն մասնակցել... ինձ Աստուած ողորմելոց է, ամօթով չեմ մնալոյ. մէկ մատնիս ծախսեցի, միւսքն ևս ծախսեցից»<sup>1</sup>:

Միաւ պետք է համարել այն կարծիքները, որ իր Արդությանին հաջողվել է շուտով հաստուցելու տպարանի պարտքը. գեռմս 1790 թվականի օգոստոսի 26-ին Նախիջևանում տպաված «Աղբք և հառաջանք» գրքույկում հիշվում են նորանոր նվիրատուների անուաները, նշելով, որ աօնութիւն արարին պարտուցն տպարանին: Բայց այս բոլորը չեն խանգարում, որ Խալդարյանի տպարանը շարունակի իր տպագրական գործը: Կարմ ժամանակով հետաձգվում է տպարանի տեղադրման գործը Նոր-Նախիջևան այն պատճառով, որ Ֆրեք գրքեր էին գտնվում մամուկի տակ, իսկ մյուս կողմից էլ Ս. Խաչ վանքի շինությունը դեռևս ավարտված չէր, քանի որ Արդությանը հենց այդ վանքում էր տրոշել տեղափոխել տպարանը:

1788 թվականին լույս է տեսնում ոռուսերեն լեզվի մի ձեռնարկ, որի հեղինակը մի հայունի էր, Կղեռպատրա Սարաֆյան անունով, որ ըստ Լեոնի, գրող Մարիամ Գարագաշյանից հետո 18-րդ դարի երկրորդ կին գրողն է հանդիսանում: Ահա՝ Սարաֆյանի գործի վերնագիրը. «Գիրք որ կոչի բանալի գիտութեան: Ոմի սա ընդ իւր մասնաւոր բառարան և սկզբունք քաղաքական ուսմանց, արարեալ և թարգմանեալ ի Ռուսաց լեզուէ ի հայ բարբառ, և ի Հայոց լեզուէ ի Ռուսաց բարբառ. Կղէօպատրայ զստեր առ ի Քրիստոս հանդուցեալ Մովսէսի Սարաֆեան, ի յօգուտ մականց և ամենից, որք ունին զկարօտութիւն և զպիտոյս: Մասիւք նոյնոյ Կղէօպատրայ հօր հանգուցեալ Մովսէսիս»:

Կղեռպատրայի բառարանը մի բավականին ստվար հատոր է, որի մի մասը՝ հայերենից ոռուսերեն, իսկ մյուս մասը՝ ռուսերենից հայերեն թարգմանություններ են: Գրքի սկզբուամբ դրված են հայերեն և ռուսերեն այրուգեններ, այսուհետեւ բերված են միավանկ, երկավանկ և բազմավանկ բառերի օրինակներն ու նրանց պատասխանելու ձևերը, որից հետո սկսվում է բուն բառարանը, որտեղ տեղավորված են հատկապես այն բառերը, որոնք ամենից շատ են օգտագործվում խոսակցության մնջում: Վերջում կան առօրյակյանքը ներկայացնող զանազան արտահայտությունների նմուշներ՝ թարգմանված հա-

յերենից ոռուսերեն: Գիրքն ունի  $16,5 \times 19,5$  սմ. մեծություն և բաղկացած է 3 թերթից + 285 էջերից:

Այս հրատարակությունից հետո, հազիվ մի քանի ամիս անց, դարձյալ 1788 թվականին լույս տեսավ ոռուսերենի ուսուցման համար մի նորկրորդ ձեռնարկ, որի կազմվեցու հետաքրքիր պատմությունը մնջ է բերել նույն ձեռնարկի առաջարանուած թագեռու վարդապետը: Ըստ այդ պատմության, տպարանատեր Խալդարյանը, նկատի առնելով Դրիմի



### Մեսրոպ Մաշտոց

(Արտահանված Պետական գրադարանի գրատեղանություն Կապուտին և Արքայի համար հանդիսանական»ից)

Հայոց գաղթականության պահանջները, ուրնք բնակեցված էին Ռուսաստանի հարավային նահանգներում և սերտ կապեր ունեին ոռուս հասարակության հետ, անտեղյակ էին նրանց լեզվին, որոշում է հայերեն-ռուսերեն բառարան կազմել: Այդ նպատակով էլ ձեռնամուխ է լինում բառեր հավաքելու գործին, բայց աշխատանքը շվերջացրած վախճանվում է:

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 96ա:

Մինչ բառարանի գործը այսպիսի աննախանձելի վիճակի մեջ էր, Ներսես Շնորհալու «Ընդհանրական»ը հրատարակելու համար Հովհանքի սրբազնի հրամանով՝ Պետքրուրդ է գալիս Թաղեռու վարդապետը։ Այստեղ հալդարյանի այրին՝ Կատարինե Զաքարովնան վարդապետին ցույց է տալիս ամուսնու գրած և դրատան անկրուններում ցարքուրդիկ ընկած բառարանի թերթերը և խնդրում նրան՝ ոռքան կարելին իցէ՝ ի բումն հապուցանել ի մի ժողովմամբ՝ զթերի և զանկատար զիդ երանելուն։ Թաղեռու վարդապետը կարծ ժամանակամիջոցում հավաքում է բոլոր բառը և այրքենական կարգով դասավորում։ Գիրքն հրատարակելիս՝ վարդապետն այն անվանում է «Նախլ լեզուազիտութեան», օջի ի բնրանոյ իրմէ՝ ունի բայսել զարդարութիմ ուղիղ ուսուցման բառից՝ և կանոնատոր խօսակցութեանց, — գրում է վարդապետը, — զօրինս և զողորմութիմ՝ ի ընդուի իրում կրել Ծանապարհք բարեաց, և ամենայն շափողք սորա՝ խաղաղութեամբ։ «...Զի ըստ շաւզացն հետոց ընթացողացն յառաջապոյն՝ տանի հանել զինուողն ինքենն ի յուղին և ի յարքունականն պողոտայ՝ կատարեալ իմաստից, պանծալի և պերճ բարբառոյն Ռուսաց։ Գիրքը լուս է տեսել «արդեամբ և ծախիւք՝ նոյնոյ լուսահոգույն՝ սպարկեցատուն կենակից Կատարինէ Զաքարովնայ արմուտնայն։ Կատարիննն առաջին հայուհին էր իրեւ հրատարակչունի։ Գիրքն ունի  $13,5 \times 19,5$  սմ. մեծություն և րադկացած է  $\text{Ժ} + 156$  էրերից։

«Նախլ լեզուազիտութեան» ձեռնարկի վերջում դրված է Ներսես Շնորհալու «Հաւատուու խոստովանիմ» աղոթքը հայերեն և ուռամերեն լեզուներով. Թարգմանիչը դարձալ հանգուցյալ Գրիգոր Խալդարյանն էր. դրանով նա նպատակ է ունեցել առ ի տալ առիթ սիրոյ՝ երկոցուց մանկանց եկեղեցւոյ։

Պետքրուրդում Խալդարյանի տպարանից լուս տեսած ամենավերջին գիրքը՝ Ներսես Շնորհալու «Ընդհանրական»ն է, և որը այդ տպարանի լավագույն հրատարակություններից մեկն է։ Գրքի տիտղոսաթերթում նշված է. «Առաքելաշակիլ առաջնորդի՝ Սանահնեցի Երկայնաբազով Արդութեանց՝ իշխանագնեալ Տեառն Յովսէփայ Արքազնագունեղ Արքեպիսկոպոսի, որոյ արդեամբն իսկ տպեցաւ՝ ի յօդուտ մանկանց եկեղեցւոյ՝ սիրելի Աղքին իրոյ։»

Արդության արքեպիսկոպոսը մեծ նվիրվածությամբ է մասնակցել Ներսես Շնորհալու սույն գրքի հրատարակման աշխատանքներին, քանի որ այդ գիրքը առաջին անգամն էր, որ լուս էր տեսնելու և մատչելի էր դառ-

նալու ընթերցող հասարակությանը. այդ մի մեծ նվաճում էր հայ տպագրության համար։ Այս կապակցությամբ 1790 թվականին նոր Նախիջևանում հրատարակված «Ողբք և հառաջանցք» գրքուվի հիշատակարանում ասված է. «Ողպիսի է լուսասփիւն այն սքանչելին մատեսն Սրբոյ Հօրն մերոյ Ներսիսի Շնորհալոյ՝ տիեզերահողակ հայրապետի՝ Ընդհանրական անուաննեալ, որ յետ վեց հարիւր քսան և մի ամ՝ ընդ գրուանաւ մնալոյն՝ լուսատու զամբարոյն այնմիկ, հազիւթէ՝ ի ձեռն առյա ազգաշահ գործոյս՝ ի լոյս ընծայեցաւ տպագրութեամբ բարձրացեալ ի յաշտանակ։»

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու պաշտպանությանը նվիրված Ներսես Շնորհալու այդ անհման գրքի հրատարակումը մեծ նշանակություն տնիք առանձնապես այդ ժամանակի համար։ Սփյուռքում ցրված և օտար եկեղեցիների կողմից հաճախ հերձված անվանված հայորդիների համար այդ մի նոր ուժեղ գննք էր, որով նրանք պաշտպան պետք է կանգնեին իրենց հարազատ Մայր Եկեղեցու կողմից դարերից ի վեր սրբագրութագործած սուրբ խորհուրդներին։

Արդությանը իր մի շարք նամակներով թելադրանքներ էր անուած Թաղեռու վարդապետին «Ընդհանրական»ի տպագրելի թղթի, կիշեների, հիշատակարանի բովանդակության և տեխնիկական ամենամանը հարցերի մասին։ նա մի տեղ գրում է. «Ենորհալուոյ Ներսես և թագն ուղղել տացես և յառաջի նորայ պատշաճաւոր ուսանաւոր դնիցես» և այն։ Թեև «Ընդհանրական»ի տիտղոսաթերթի վրա տպագրման որպես թվական հիշատակված է 1788 թվականի մայիսի 1-ը, բայց իրականում նա լուս է տեսնում 1789 թվականին։ Այդ մասին է վկայում Արդության արքեպիսկոպոսի կողմից 1789 թվականի ապրիլի 3-ին Թաղեռու վարդապետին գրած մի նամակը, որտեղ հետագա տղերուվ ողջունում է նրա լուս ընծայումը. «Ընկալայ զիափակելին իմ և զհարկատը ազգին մերոյ և զպտուղ աշխատանաց քոց զմէկ հատ Ընդհանրականն, լիալի սրտի նախ գոհացայ զողորմութեանցն Աստուծոյ, որ արժանացոյց մեղ ասեանել զաւարա նորին, և ապա շնորհակալեցայ զանդուկ աշխատութենէ քումնէ և զքանից և ամենայն ինչ ճարտարամտութեամբ զարդարելոյն. Փրկիչն մեր վարձատեալ զեեզ շնորհիւ իւրով փայլեցուացէ զքեզ... քաղցր է ինձ դրութիւն նորին և կազմնա։»

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 119ա.

«Բնդհանրական»ի սկզբում գրված է Հովսեփի արքեպիսկոպոսի մի ընդարձակ առաջարանը: Գրքում կան մի շարք հաջող նկարներ ներսեւ Շնորհալու (2 հատ), Մեսրոպ Մաշտոցի, Տիրամոր և Հիսուսի, անշանք թագաւորացն Հայոց» և Հովսեփի արքեպիսկոպոսի կնիքը: Գիրքը պարունակում է նաև ներսեւ Լամբրոնացու «Դրուատ պատմագրաբար ի յաստուածահրամէր փոխումն՝ Սրբազնասուրբ Հայրապետին մերոյ՝ Տեառն ներսէսի Կայիցացը» վերնագրով գրությունը: Հիշատակարանուած տեղեկություններ կան Գրիգոր Խալդարյանի տպարանի վերջին անցքերի, տպարանի ովելցած պարտքի, Արդությանի շինարարությունների, ազգատոհմի և զինադրոշմի, Թագեռու վարդապետի գործունեության մասին: Հիշատակարանի վերջում խոսվում է նաև «Ուսաւանդպի Խալդարեան պարուն Գրիգորի՝ զհոգեծին զաւակն և զձեռնաստմ հարազատն» Մկրտում Աստվածատրյանի մասին, որն իր պատանեկության տարիներից սկսած մեծ աշխատանք է տարել տպարանում՝ «թէ՛ ի ծովելն, թէ՛ ի հարթելն, թէ՛ ի շարելն և թէ՛ ի ցրուելն զկապարեալ տառն»: Գիրքի տաճի  $17,5 \times 23,5$  մմ. մեծություն և բաղկացած է ժամանակակից էջերից:

Պետերբուրգում հրատարակված վերոնիշշալ երեք գրքերի վրա էլ, ի պատիվ տպարանի բազմաշխատ հիմնադրի, հիշել են նրա անունը այսպես՝ «Ի տպարանի Խալդարեան Խօջամալի» որդի ի Քրիստոս հանգուցեալ Գրիգորի:

1790 թվականի հունվարի 4-ին Տեր Ստեփանին<sup>1</sup> իր գրած նամակում Արդությանը

1. Ստեփան քահանան կոստանդնուպոլսեցի էր: Նա Դրիմի հայ գաղթականների հետ եկել էր Նոր-Նախշեան և այստեղից, Հովսեփ արքեպիսկոպոսի կարգադրությամբ, որպես նվիրակ ուղարկվել էր Հնդկաստան:

ավետում է, որ կարողացել է ավատել տպարանը: Նա գրում է. «...Ելեալ գնացի ի յԱշտարիսան և ի Ղվար, անդ՝ առ մերձաւորս բանիք և առ հեռաւորս գրով օպնութիւն խնդրեցի, հազիւթէ Դօ (400) թուման ժողովեցաւ: Գօ (300) թուման ևս ի տանէս վաճառեցի ինչ ինչ: Զելեք հարիւրն տուի, Թօ (900) թումանին սանադ և զամին տուեալ ազատեցի տպարանն»<sup>2</sup>:

Արդությանի մի քանի այլ նամակներից մերևում է, որ նա, իրոք, գնացել է Աստրախան և Ղվար, գիմել է տեղի հարուստներին, դրամ է հավաքել, երեք հարյուր թուման ևս ինքն է դրել, վճարել պարտքը և ազատել տպարանը: Իսկ այս ամենը վկայում է այն մասին, որ հանձին Արդությանի մենք ունենք լուսամիտ մի հոգիրական, որը քաջ գիտակցելով տպագրության նշանակությունը հայ ժողովրդի գարդացման գործում, արել է կարելին՝ թուզ շտալու Ռուսաստանում ստեղծված հալկական տպագրության դրծը խափանելու: Ահա այս շրջանին է, որ Արդությանը տպարանը տեղափոխել է տալիս Նոր-Նախշեանի Ս. Խաչ վանքը:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է պարզաբանել մի հարց և— Հովսեփի արքեպիսկոպոս Արդությանը ի՞նչ նպատակով է տպարանը տեղափոխում Նոր-Նախշեան և ի՞նչ նոր հեռանկարներ էր կապում նա այդ տպարանի հետ:

Այս հարցը պարզաբանելու համար անհրաժեշտ է մի հետադարձ ակնարկ դցել իր ժամանակի հայկական կյանքի և քաղաքական անցուցարձի վրա:

2. «Արագատ» ամսագիր, Վաղարշապատ, 1888 թ., էջ 360:

(Շարունակելի)